# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** 75

**25 փետրվարի 2020 թվականի N _Ա**

**ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՆ (2019Թ.N-COV) ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի N 336-Ա և փետրվարի 6-ի N 467-Ա հրամանները՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) 2019թ.n-Cov-ի հիվանդության հակազդման հարցերով արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) ՀՀ Սյունիքի մարզում 2019թ.n-Cov-ին հակազդման՝ ներթափանցման, տարածման, կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների ցանկը՝ համաձայ N 2 հավելվածի

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

25.02.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ.Պողոսյան**

2020թ. փետրվարի 25

ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020 թվականի փետրվարի 25-ի
N 75 որոշման

Կ Ա Զ Մ

2019թ. n-Cov-ի հիվանդության հակազդման հարցերով արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի կազմը

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ – հանձնաժողովի նախագահ
2. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ(համաձայնությամբ)
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
6. ՀՀ ԱՆ<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի <<Սյունիք>> մասնաճյուղի տնօրեն (համաձայնությամբ)
7. <<Կապան>>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
8. <<Գորիս >>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
9. << Սիսիան >>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
10. << Մեղրի >>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
11. << Քաջարան >>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
12. << Գորայք>>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
13. << Տեղ>>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
14. << Տաթև>>խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
15. ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ)
16. <<Կապանի ԲԿ>>ՓԲԸ-ի տնօրեն
17. <<Գորիսի ԲԿ>>ՓԲԸ-ի տնօրեն
18. <<Սիսիանի ԲԿ>>ՓԲԸ-ի տնօրեն
19. <<Մեղրու Տ ԲԿ>>ՓԲԸ-ի տնօրեն
20. <<Քաջարանի ԲԿ>>ՓԲԸ-ի տնօրեն
21. <<Տեղի ԱԱՊԿ >>ՊՈԱԿ -ի տնօրեն
22. <<Գորայքի ԱԱՊԿ >>ՊՈԱԿ -ի տնօրեն
<<Շինուհայրի ԱԱՊԿ >>ՊՈԱԿ -ի տնօրեն
23. ՀՀ ԱՆ<<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի <<Սյունիք>> մասնաճյուղի էպիդեմիոլոգ (համաձայնությամբ)
24. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մաարզային կենտրոնի պետ(համաձայնությամբ)

25. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան կենտրոնի պետ (համաձայնությամբ)
26. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետ (քարտուղար)

25.02.2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար — Է.Մարտիրոսյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2020 թվականի փետրվարիի 25-ի N75 որոշման

# ՑԱՆԿ
# ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻՆ (2019Թ.N-COV) ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| | I) ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | | |
| 1. | Նոր կորոնավիրուսային վարակով (2019-NCOV) պայմանավորված դեպքերի հայտնաբերման և հաղորդման կազմակերպում | Շուրջօրյա ռեժիմով | Մարզպետարան, բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 2. | Նոր կորոնավիրուսային վարակով (2019-NCOV) կասկածելի դեպքերի համաճարակաբանական դիտարկման և դեպքերի համաճարակաբանական բնորոշման կազմակերպում | Շուրջօրյա ռեժիմով | Մարզպետարան, բժշկական կազմակերպությունների ղեկավարներ, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի <<Սյունիքի >> մասնաճյուղ |
| | II.ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ (2019-nCoV) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Նոր կորոնավիրուսային վարակով (2019-NCOV) պայմանավորված դեպքերի լաբորատոր հետազոտության և նմուշառման կազմակերպում | Շուրջօրյա ռեժիմով | Մարզպետարան, բժշկական կազմակերպությունների ղեկավարներ, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի <<Սյունիքի >> մասնաճյուղ |
| 4. | Նոր կորոնավիրուսի վարակով (2019-NCOV) «ՄԵՂՄ» արտահայտված ախտանշաններով հիվանդների տնային խնամքի և կոնտակտների նկատմամբ բժշկական հսկողության սահմանման կազմակերպում | Շուրջօրյա ռեժիմով | Մարզպետարան, ԱԱՊ իրականացնող բժշկական կազմակերպություննե րի ղեկավարներ |
| 5. | Նոր կորոնավիրուսային վարակով (2019-NCOV) պայմանավորված պացիենտի կլինիկական վարման կազմակերպում՝ ըստ ՀՀ ԱՆ կողմից մշակված մեթոդաբանության | Շուրջօրյա ռեժիմով | մարզպետարան<br>բժշկական կենտրոններ |
| 6. | Հիվանդության բարդությունների կանխարգելման կազմակերպում | Շուրջօրյա ռեժիմով | մարզպետարան<br>բժշկական կենտրոններ |
| **III.ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ (2019-nCoV) ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ** | | | |
| 7. | Նոր կորոնավիրուսային վարակի (2019-nCoV) կասկածով պացիենտի՝ համաձայն դեպքի ստանդարտ բնորոշման, մեկուսացում բնական օդափոխությամբ ապահովված սենքում՝ | Իրավիճակից ելնելով ՝ շուրջօրյա ռեժիմով | մարզպետարան<br>բժշկական կազմակերպություննե րի ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Բուժանձնակազմի կողմից պացիենտի խնամքի, լաբորատոր նմուշառման և նմուշների տեղափոխման կամ միջամտության ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների խիստ կիրառում | Իրավիճակից ելնելով՝ շուրջօրյա ռեժիմով | մարզպետարան բժշկական կազմակերպություննե րի ղեկավարներ |
| 9. | Բուժանձնակազմի ուսուցում՝ կորոնավիրուսի ախտանշանների, վարակի աղբյուրի, փոխանցման ուղու և կանխարգելիչ միջոցառումների մասին | Պարբերաբար | Մարզպետարան, բժշկական կազմակերպությունների ղեկավարներ, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի <<Սյունիքի >> մասնաճյուղ |
| 10. | Թափոնների անվտանգ գործածության ապահովում՝ համաձայն Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի | Շուրջօրյա ռեժիմով | ծառայությունների և ստորաբաժանումներ ի ղեկավարներ |
| 11. | Պացիենտի խնամքի պարագաների մանրէազերծում՝ համաձայն Առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի | Շուրջօրյա ռեժիմով | ծառայությունների և ստորաբաժանումներ ի ղեկավարներ |
| 12. | Այցելուների մուտքի սահմանափակում բաժանմունք, այցելության անհրաժեշտության դեպքում այցելուների ապահովում միանվագ օգտագործման դիմակով և վերջիններիս կողմից հսկողության սահմանում ձեռքերի ախտահանման նկատմամբ: | Շուրջօրյա ռեժիմով | բժշկական կենտրոններ |
| 13. | Նոր կորոնավիրուսային վարակով (2019-nCoV) պայմանավորված կասկածելի պացիենտի հիվանդասենյակ մուտք գործած անձանց հաշվառում՝ ներառյալ բուժանձնակազմի՝ համաձայն ներկայացված ձևաչափի: | Շուրջօրյա ռեժիմով | բժշկական կենտրոններ |

25.02.2020

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано. MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝

Է. Մարտիրոսյան